

<p>Unilateral License to Use Microsoft Software Products</p> <p>Microsoft Corporation, or one of its affiliates, grants to non-governmental organizations (each an “NGO”) in the countries identified here a limited, non-transferable, royalty-free right to use Microsoft software products for their organizations’ purposes. This license expires on the earlier of January 1, 2020 or the date the NGO is otherwise licensed under an applicable Microsoft licensing program. For purposes of this license, an NGO shall be as defined here. The Microsoft software products are not licensed for import, export, or resale. No other rights are granted, and warranties and product support are not included in this license. In the event of a conflict between these license terms and those that came with the Microsoft software products, these license terms control with respect to such conflicting terms. An NGO’s use of the Microsoft software products constitutes its acceptance of these license terms.</p> <p>A printable Certificate of License is located here. This Certificate of License constitutes evidence of an NGO’s license.</p>	<p>Մայքրոսֆթի ծրագրային արտադրանքն օգտագործելու միակողմ լիցենզիա</p> <p>Մայքրոսֆթ Քորպորեյշնը, կամ նրա մասնաճյուղերից մեկը, այստեղ <<հղում 1>> նշված երկրներում ոչ կառավարական կազմակերպություններին (ՈԿԿ) տրամադրում է Մայքրոսֆթի ծրագրային արտադրանքն իրենց կազմակերպությունների նպատակների համար օգտագործելու սահմանափակ, անփոխանցելի, անվճար իրավունք: Սույն լիցենզիան գործում է մինչև 2020 թ. Հունվարի 1-ին կամ այն օրը, մինչև երբ ՈԿԿ-ը լիցենզավորվել է՝ Մայքրոսֆթի համապատասխան լիցենզավորման ծրագրով: Սույն լիցենզիայի շրջանակներում ՈԿԿ-ի սահմանումը տրված է այստեղ՝ <<Հղում 2>>: Մայքրոսֆթի ծրագրային արտադրանքը չի թույլատրվում ներկրել, արտահանել, կամ վաճառել: Որևէ այլ իրավունք չի ընձեռվում, և արտադրանքի երաշխիքները և ապահովումն այս լիցենզիայում ներառված չեն: Սույն լիցենզիայի պայմանների և Մայքրոսֆթի ծրագրային արտադրանքի տրամադրման պայմանների միջև հակասության դեպքում կիրառվում են սույն լիցենզիայի պայմանները: ՈԿԿ-ի Մայքրոսֆթի ծրագրային արտադրանքի օգտագործումը հավաստում է է նրա կողմից սույն լիցենզիայի պայմաններն ընդունելը:</p> <p>Լիցենզիայի սերտիֆիկատը կարելի է տպել այստեղից <<Հղում 3>>: Այս Լիցենզիայի սերտիֆիկատը հանդիսանում է ՈԿԿ-ի լիցենզիայի վկայություն:</p> <p>Հղումներ</p>
--	--

<p>Links:</p> <p>Link 1: The following countries are included: Armenia, Azerbaijan, Belarus, China, Kazakhstan, Kyrgyzstan, Malaysia, Russia, Tajikistan, Turkmenistan, Uzbekistan, and Vietnam.</p> <p>Link 2: For purposes of the Unilateral License to Use Microsoft Software, NGO means: All nonprofit or nongovernmental organizations (NGOs) that operate on a not-for-profit basis and have a mission to benefit the public, whether registered or otherwise recognized by International Human Rights organizations that could include, but is not limited to, the following:</p> <ul style="list-style-type: none"> • Providing relief to the poor • Advancing education • Improving social welfare • Preserving culture • Preserving or restoring the environment • Promotion of human rights • Establishment or development of civil society. <p>For the purposes of the unilateral license, NGO includes small independent media organizations, including newspapers, independent media, independent journalists, or others that hold a media license, or that are members of a local media association, or are</p>	<p>Հղում 1: Ներառված են հետևյալ երկրները՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Չինաստան, Կազախստան, Դրոգստան, Մալազիա, Ռուսաստան, Թուրքմենստան, Ուզբեկստան և Վիետնամ:</p> <p>Հղում 2: Միակողմ լիցենզիայի շրջանակներում Մայքրոսոֆթի ծրագրերը Հայաստանում օգտագործող ՈԿԿ-երի սահմանման մեջ ներառվում են.</p> <p>Բոլոր շահույթ չհետապնդող կամ ոչ կառավարական կազմակերպությունները (ՈԿԿ), որոնք գործում են շահույթ չհետապնդող հիմունքներով և առաքելություն ունեն օգտակար լինել հանրությանը, եթե գրանցված են կամ այլ կերպ ճանաչված են Մարդու իրավունքների միջազգային կազմակերպությունների կողմից, որոնց գործունեությունը ներառում, սակայն սահմանափակված չէ հետևյալով</p> <ul style="list-style-type: none"> • Աղքատների աջակցության ապահովում • Կրթության զարգացում • Սոցիալական բարեկեցության բարելավում • Մշակույթի պահպանություն • Շրջակա միջավայրի պահպանություն կամ վերականգնում • Մարդու իրավունքներին աջակցություն • Քաղաքացիական հասարակության հիմնադրում կամ զարգացում <p>Միակողմ լիցենզիայի շրջանակներում, ՈԿԿ-ը ներառում է նաև փոքր անկախ լրատվական կազմակերպություններ, ներառյալ թերթեր, անկախ լրատվամիջոցներ, կամ այլք, որոնք ունեն տեղական հանրային հեռահաղորդակցության լիցենզիա, կամ որոնք հանդիսանում են տեղական լրատվական միությունների անդամներ կամ ճանաչված են</p>
--	--

<p>recognized by an international media or press freedom organization.</p> <p>Not included in this definition are:</p> <p>Ineligible Organizations</p> <p>The following organizations are not eligible to participate in the program:</p> <ul style="list-style-type: none"> • Government organizations • Educational institutions • Healthcare organizations <ul style="list-style-type: none"> ○ Exception: Certain health clinics that provide services for free or on an ability-to-pay basis may be eligible. • Professional sports organizations • Political parties and candidates, and organizations under their control • Labor, or fraternal organizations • Religious organizations <ul style="list-style-type: none"> ○ Exception: Separate charitable entities with a secular community service or project may be eligible • International or national news organizations and their affiliates, which have a print circulation and/or broadcast media through any available technologies to a broad international or national audience. 	<p>միջազգային լրատվական կամ մամուլի ազատության կազմակերպությունների կողմից</p> <p>Սույն սահմանման մեջ ներառված չեն</p> <p>Դիմելու իրավունք չունեն</p> <p>Հետևյալ կազմակերպությունները չեն կարող դիմել ծրագրին մասնակցելու համար</p> <ul style="list-style-type: none"> • Կառավարական կազմակերպությունները • Կրթական հաստատությունները • Առողջապահական կազմակերպությունները <ul style="list-style-type: none"> ○ Բացառություն. Որոշ առողջապահական կլինիկաներ, որոնք մատուցում են անվճար կամ վճարունակության տարբերակման հիման վրա ծառայություններ կարող են դիմել • պրոֆեսիոնալ սպորտային կազմակերպություններ • Քաղաքական կուսակցությունները և թեկնածուները և նրանց կողմից հսկվող կազմակերպություններ • Աշխատանքային կազմակերպություններ կամ եղբայրություններ • Կրոնական կազմակերպությունները <ul style="list-style-type: none"> ○ Բացառություն. Աշխարհիկ հասարակական ծառայություն կամ ծրագիր իրականացնող առանձին բարեգործական կազմակերպություններ կարող են դիմել • Միջազգային կամ ազգային լրատվական կազմակերպություններ կամ նրանց մասնաճյուղեր, որոնք ունեն տպագիր շրջանառություն և/կամ լրատվական հեռարձակում են իրականացնում որևէ հասանելի տեխնոլոգիայի միջոցով միջազգային կամ ազգային լայն հանրության
---	---

Link 3:

http://download.microsoft.com/documents/en-us/corporatecitizenship/unilateral_licenses/certificates/CERTIFICATE OF LICENSE Armenia.pdf

Հղում 3:

http://download.microsoft.com/documents/en-us/corporatecitizenship/unilateral_licenses/certificates/CERTIFICATE OF LICENSE Armenia.pdf